ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ (EBT) ՄԱՍԻՆ

- Եթե մի տարբեր Քաունթի կամ Նահանգից դուրս փոխադրվեք, և նպաստների համար դիմում ներկայացնեք այդ Քաունթիում կամ Նահանգում, կստանաք նոր EBT տոմս: Եթե ձեր հին EBT տոմսի վրա սննդադրոշմի նպաստներ մնացած լինեն, դուք դեռևս դրանք կկարողանաք ձեր նոր վայրում օգտագործել: Խնդրում ենք հիշեք և հնարավորին չափ շուտ օգտագործեք ձեր հին տոմսից մնացած բոլոր նպաստները:

- Եթե EBT համակարգի սխալ պատահելով ձեր հաշվից սխալ գումար հանված լինի, դիմեք Հաճախորդի Սպասարկման անվճար հեռախոսահամարով (1-877-328-9677): Ձեր պահանջը կհետաքննվի և եթե իրավասու գտնվեք սննդադրոշմի կամ կանխիկ նպաստների վերամիջոցավորման, ձեր հաշվին որպես վարկ կավելացվի այդ գումարը: Եթե ձեր պահանջը մերժվի, իրավունք կունենաք նահանգային լսում պահանջել ձեր տեղի վելֆերի գրասենյակում:

- Եթե ձեր նպաստները 180 օր շարունակ չօգտագործեք, այնուհետև ձեր նպաստները չեք կարողանա օգտագործել՝ մինչև կապ հաստատելը ձեր Քաունթիի աշխատողի հետ: Եթե անցել է լրացուցիչ 185 օր ևս և չեք օգտագործել ձեր նպաստները, ձեր նպաստները կվերացվեն ձեր հաշվից ամեն ամիս: Սննդադրոշմի նպաստները չեն վերականգնվի: Ձեր կանխիկ նպաստները կարող են վերականգնվել՝ եթե հեռախոսեք ձեր Քաունթիի աշխատողին: